ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՀԵ ԵՍԱՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Եսայան,

ի պատասխան Ձեր 14.12.2023թ. հ.063 գրության՝ տեղեկացվում է, որ «Երևանի Ռաֆֆու անվան հ.36 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ դպրոց) բակային տարածքի հարևանությամբ գտնվող դպրոցի նախկին մասնաշենքերում գործունեություն են ծավալում ՀՀ կրթության տեսչական մարմինը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի վարչությունը, «Երևանի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ը և «Երևանի Արաբկիրի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի՝ 11.12.2019 թվականի հ.25/01 119144 գրությամբ դպրոցի տնօրենը տեղեկացվել է, որ որպես ավտոմեքենաների երթևեկը կրթօջախի բակ արգելող արգելապատնեշ՝ կարող են օգտագործվել դպրոցի դարպասները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ